PRESS RELEASE

PR 24/386

ԱՄՀ աշխատակազմը «Պահուստային ծրագրի» չորրորդ ամփոփիչ ստուգման շուրջ աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերում Հայաստանի հետ

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք փոխանցում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները ներկայացնեն: Սույն առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- *ԱՄՀ աշխատակազմը և Հայաստանի իշխանություններն աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել ՀՀ իշխանությունների կողմից կանխարգելիչ համարվող՝ եռամյա «Պահուստային ծրագրի» (SBA) չորրորդ ամփոփիչ ստուգման շուրջ: «Պահուստային ծրագրի» նպատակն է աջակցել կառավարության քաղաքականության և բարեփոխումների օրակարգին՝ մակրոտնտեսական կայունությունը պահպանելու և բարձր, կայուն աճը խթանելու համար:*
- *Հայաստանի տնտեսության բարձր աճը պահպանվել է, ընդ որում կանխատեսվում է, որ 2024 թ. ՀՆԱ-ի աճը կհասնի 6 տոկոսի՝ ներքին պահանջարկով պայմանավորված, նախքան 2025 թ.-ին նվազելը մինչև 4.9 տոկոս:*
- *Քաղաքականության առաջնահերթությունների թվում են տնտեսական դիմակայունության բարձրացումը, լրացուցիչ հարկային եկամուտների ներգրավումը՝ առաջնահերթ ծախսերին օժանդակելու համար, միաժամանակ պահպանելով հարկաբյուջետային կայունությունը, ինստիտուցիոնալ դաշտի ուժեղացումը և շարունակվող կառուցվածքային բարեփոխումները՝ ուղղված աշխատուժի արտադրողականության խթանմանը, առևտրի դիվերսիֆիկացման բարձրացմանը և ընդհանուր բիզնես միջավայրի բարելավմանը:*

Վաշինգտոն, ԿՇ – հոկտեմբերի 21, 2024 թ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Իվա Պետրովայի ղեկավարությամբ, 2024 թ. սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 1-ն այցելեց Երևան և հաջորդիվ լրացուցիչ հեռավար քննարկումներ անցկացրեց

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

«Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում չորրորդ ամփոփիչ ստուգման համար: Քննարկումների ավարտին տկն. Պետրովան արեց հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը և ՀՀ իշխանություններն աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել քաղաքականությունների շուրջ՝ եռամյա «Պահուստային ծրագրի» շրջանակում չորրորդ ամփոփիչ ստուգումն ավարտելու համար. ծրագիրն աջակցում է Հայաստանի տնտեսական բարեփոխումների ծրագրին: Համաձայնությունը ենթակա է ԱՄՀ-ի գործադիր խորհրդի հաստատմանը, որի կողմից այս ամփոփիչ ստուգման քննարկումը նախատեսվում է դեկտեմբերի կեսին: Այս հաստատումը հնարավորություն կտա օգտվելու շուրջ 24.5 միլիոն ԱՄՆ դոլարից (18.4 միլիոն փոխառության հատուկ իրավունքից (ՓՀԻ))՝ «Պահուստային ծրագրի» մեկնարկից սկսած ընդհանուր հասանելիությունը հասցնելով շուրջ 122.7 միլիոն ԱՄՆ դոլարի (92 միլիոն ՓՀԻ):

Հայաստանի տնտեսական բարձր ակտիվությունը պահպանվում է, ընդ որում իրական ՀՆԱ-ն տարվա առաջին կիսամյակում աճել է 6.5 տոկոսով՝ պայմանավորված ներքին պահանջարկով: Զբաղվածության աճը կայուն է եղել, 2023 թ.-ի սկզբից սկսած միջինը կազմելով 19 տոկոս, իսկ գնաճը ցածր է պահպանվել՝ սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմելով 0.6 տոկոս: Ընթացիկ հաշվի պակասուրդն ընդլայնվել է՝ ժամանակավոր գործոնների թուլացմանը և զբոսաշրջության ու դրամական փոխանցումների շարունակվող նորմալացմանը զուգահեռ: Նախնական տվյալները ցույց են տալիս, որ 2024 թ. բյուջեի շրջահայաց կատարումը մինչև 2024 թ. սեպտեմբերը ներառյալ հանգեցրել է ընդհանուր բյուջեի փոքր պակասուրդի: Կառավարության պարտքը մնում է չափավոր՝ 2023 թ. վերջին կազմելով ՀՆԱ-ի 48.4 տոկոսը: Բանկային համակարգը շարունակում է ունենալ կապիտալի և իրացվելիության ամուր բուֆերներ, ինչպես նաև բարձր շահութաբերություն:

Վերջին մի քանի տարիների բարձր աճի տեմպը շարունակում է աստիճանաբար նորմալանալ, ընդ որում սպասվում է, որ 2024 և 2025 թթ. ՀՆԱ-ի աճը կհասնի համապատասխանաբար 6 և 4.9 տոկոսի՝ ներքին սպառման և արտաքին պահանջարկի դանդաղմանը զուգահեռ: Սպասվում է, որ կարճաժամկետ հատվածում գնաճը ցածր կպահպանվի և միջնաժամկետ հատվածում աստիճանաբար կմոտենա ՀՀ ԿԲ գնաճի թիրախին: Այս հեռանկարի մասով նշանակալի ռիսկերի թվում են՝ աշխարհաքաղաքական լարվածություններն ու առևտրային գործընկերների մոտ աճի հնարավոր հետընթացը, կապիտալի ներհոսքերի փոփոխությունը և պարենի ու էներգակիրների համաշխարհային գների կտրուկ աճը: Դրական առումով՝ աճը կարող է գերազանցել սպասումները, եթե զուտ արտահանման արդյունքները սպասվածից լավը լինեն և եթե կառուցվածքային բարեփոխումները և փախստականների ինտեգրումն ավելի արագ իրականացվեն:

2025 թ. բյուջեի նախագծում պատշաճ արտացոլված են ծախսային առաջնահերթ կարիքները, այդ թվում՝ ազգային անվտանգությունն ու փախստականների ինտեգրումը: Ծախսային ճնշումների ավելացման պայմաններում, այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի միջնաժամկետ ծախսերի առաջնահերթությունների զգուշավոր որոշում և հարկային նոր քաղաքականությունների ներդրում՝ հարկաբյուջետային կանոններին համահունչ հարկաբյուջետային կոնսոլիդացմանը օժանդակելու և պարտքը ցածր մակարդակի վրա պահելու համար: Բարեփոխումների իրականացումը՝ ուղղված միջնաժամկետ հարկաբյուջետային պլանավորման ուժեղացմանը, հանրային ֆինանսների կառավարման բարելավմանը, այդ թվում՝ հարկաբյուջետային ռիսկերի ողջամիտ կառավարման, թափանցիկության և կառավարման միջոցով, և հանրային ներդրումների կառավարման համակարգի ամրապնդումը, մնում են խիստ կարևոր հարկաբյուջետային ջանքերին օժանդակելու համար:

Գնաճային ցածր ճնշումների պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) շարունակել է վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքի աստիճանական իջեցումը՝ գնաճը դեպի իր թիրախն ուղղորդելու համար: Ապագա որոշումներն անհրաժեշտ է, որ շարունակվեն առաջնորդվել գնաճի զարգացումներով և գնաճի սպասումներով: Անհրաժեշտ է, որ ճկուն փոխարժեքը մնա որպես շոկերի հիմնական կլանիչ և ողջունելի է իշխանությունների՝ միջազգային պահուստների առողջ բուֆերներ պահպանելու հանձնառությունը: Դրամավարկային, փոխարժեքի և ֆինանսական կանոնակարգման թափանցիկության բարձրացման ընթացիկ ջանքերն օգնում են ՀՀ ԿԲ քաղաքականության վերաբերյալ հաղորդակցության բարելավմանը, և անհրաժեշտ է շարունակել ՀՀ ԿԲ նորմատիվային և վերահսկողական դաշտի ուժեղացման ջանքերը: Ֆինանսական ռիսկերի իր շարունակական մշտադիտարկմամբ, ներառյալ վերջերս իրականացված կապիտալի հակացիկլային շեմի բարձրացմամբ, ՀՀ ԿԲ-ն շարունակում է զգոն մնալ ֆինանսական հատվածի ռիսկերը մեղմելու հարցում:

«Կառավարության կառուցվածքային բարեփոխումների օրակարգով պատշաճ ուշադրություն է դարձվում ներառական աճի խթանմանը, այդ թվում՝ զարկ տալով աշխատուժի կազմում երիտասարդների, կանանց և բնակչության խոցելի խմբերի մասնակցությանը, խրախուսելով երկրի արտահանման զամբյուղի և շուկաների դիվերսիֆիկացումը և բարելավելով բիզնես միջավայրը: Այս նպատակներին հասնելու համար պահանջվում է որոշակի, լիարժեք գնահատված ծախսերով զբաղվածության և արտահանման ռազմավարությունների մշակում և իրականացում, կառավարման բարեփոխումների առաջնահերթությունների սահմանում, սնանկության դաշտի արդիականացում և ներդրումային խթանների օպտիմալացում՝ որակյալ ներդրումներին օժանդակելու համար:

ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ իշխանություններին, մասնավոր հատվածին, զարգացման գործընկերներին և դիվանագիտական համայնքին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: